

Հայք այս կետին մէջ ալ կը զանազանէին միւս եկեղեցիներէն, եւ Յունաց մեղադրութեան կ'ենթարկուէին. որոց պատասխանելով Տարօնացին, կը յիշէ փրկչական խօսքը՝ թէ փեսային ներկայութեանն առագաստի մանկունք պարտաւոր չեն պահելու. եւ թէ այս յիսնօրեայն՝ Քրիստոսի հոգեւոր փեսայութեան ու մեր վրայ թագաւորութեան ժամանակն է, որով եւ առանց պահոց պէտք է անցնել (Թէոփ. 283): Գիւտաւոր՝ բայց մեզ անբաւական բացատրութիւն մը: Ամէն բանի դիւրաւ զիջանող Անաւարդեցին՝ այս բանիս մէջ եւս ուզեց օտարաց նմանիլ, պահանջելով Հեթմէն՝ որ « զյինանցն ուրբաթսն ի մսէ պնտիմք » (Անաւ.): Ուրբաթ միայն կ'ըսէ, զի Լատինք արդէն լուծած էին չորեքշաբաթին եւ շաբաթ կը պահէին: Բայց կաթողիկոսին այդ ձեռնարկն աւելի բախտաւոր չեղաւ քան իւր միւս նորութիւնքը. այնպէս որ Տաթեւացւոյն օրով դեռ հին սովորութիւնը կը յարատեւէր անընդհատ եւ ընդ հանուր (Քրգ. ձմր. 660):

Տ. — Ծարարսպանք: — Տաթեւացին՝ տոհմային սովորութեանց մասին բացարձակ լաւատեսութեամբը կը ջանայ ուրիշ կերպ մեկնել վերոյիշեալ վարդապետի ու